ՔՍԱՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ 2275 - ԵՐԿՈՒՇԱԲԹԻ—12- ՄԱՐՏ—Ն. Տ. —24—ՄԱՐՏ—1879

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին ի Պոլիս հմր. 8 Մէճ.
» » Գաւառաց » 10 Մէճ.
Վեցամս. » ի Պոլիս » 4 Մէճ.
» » Գաւառաց » 5 Մէճ.
Օտար երկիրներու » 50 Ֆր.
Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղուրուշ, երկու անգամի համար 2 ղուշ է. աւելի անգամներու համար կատ սակարկութիւն կըլլայ :
Իւրաքանչիւր թիւ 4 ղրշնոց թուղթ.

ՄԱՍԻՍ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրածախքը խմբագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագիր—Տնօրէնին պիտի ուղղուի, Ղալաթիա Սանտըքճըլար ճատտէսի թիւ 198, Նորօ խան, Մասիսի գրասենեակը :
Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր :
Զետղուած նամակ, յօդուած, ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 12 ՄԱՐՏ

ԱԶԳ

Թղթադրամին տարապայման անկմանը պատճառաւ, որով լրագրոյս մէկ մի թերթին գինը, 50 փարանոց թղթադրամը 6 1/2 փարա հաշուելով 13 փարայի իջած է, մինչդեռ միւս կողմանէ բոսթայի և դրոշմի ծախքերը մաքուր դրամի վերածուելով քառապատիկ բարձրացան, ինչպէս մեր միւս ամեն ծախքերը, պարտաւորեցանք ձեռքէ ծախուած Մասիսի թերթերուն գինը կրկնապատկել, այսինքն երկու 50 փարանոց թղթադրամէն չորս 50 փարանոցի կամ որ նոյն է՝ 13 փարայէն 26 փարայի հանել առ այժմ։

Ասկէ զատ՝ տեղական թղթատարութեան միջոցաւ ղրկուած լրագրաց բոսթայի տարեկան ծախքն ալ քառապատիկ բարձրանալուն՝ այսինքն չորս մեճիտիյէի մօտ հասնելուն պատճառաւ՝ անոնց տարեկան գնոյն վրայ ալ երկու մեճիտիէ բոսթայի ծախք աւելցնելու կը պարտաւորիմք։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թղթադրամին դահավէժ ընթացքը շարունակելէ 'ի վեր՝ տեղական լրագրաց էջերն անդադար անով կըզբաղին. հազար ու բիւր առաջարկութիւնք զերար կը գլեն, փոխառութեանց յոյսեր կը ծնանին և յօդս կը ցնդին, վիճակնիս երթալով կը կնճռոտի և այդ Գորդիոնական հանգոյցին լուծումը դեռ չգտնուիր։

Թէ և առհասարակ առեւտրական անձանց չափով մը միտաակար, բայց դաս մը մարդոց յետին աստիճան նեղութեան և տառապանաց պատճառ եղած է, հետեւաբար շատերու յուսահատութեան, և ոմանց ալ մոլեգնութեան առիթ, որ կրնայ մինչև իսկ ընկերական կենաց վտանգ սպառնալ, վասն զի յուսահատութիւնը չար խորհրդատու է, և մոլեգնութիւնը՝ դատողութեան դադրած վայրկենէն կ'սկսի։ Գոհութեամբ կը լսենք թէ Վեհ. Սուլթանը սրտի մօք թղթադրամին բարձման կը բաղձայ, և ժողովուրդը գոհ ընելու համար՝ մինչև իսկ ոմանց արդար պահանջմանց անլսող կըլլայ ո՛ և է փոխարինութիւն կամ հատուցմունք զլանալով անոնց ցարդ։ Խօսքերնիս շարունակելով՝ մօքերնիս թերևս աւելի լաւ հասկցուի։

Որ և է չարեաց առաջքն առնելու համար՝ հարկ է նախ այն չարիքին բնութիւնը լաւ ճանչել։ Պարզ օրինակով մը բացատրեմք։ Հիւանդի մ'այցելութեան գնացող բժշկին գլխաւոր ճարտարութիւնն հիւանդութեան ինչ ըլլալը որոշելուն վրայ է, ըստ այնմ պէտք եղած դարմանը տնօրինելու համար։ Արդ՝ առանց ընտրութեան ձեռքերնիս ինկած քաղաքական տնտեսութեան մ'առաջին հատորը բանանք և ուշի ուշով ընթեռնլով՝ թղթադրամին ինչ ըլլալը հասկընանք, ինչպէս որ փորձն ալ այս վերջին օրերս աններև կապացուցանէ։

« Թղթադրամն հրապարակ ելած վայրկենէն՝ թէև քանի մը խաբող և խաբեալ անձանցմէ ընդունելութիւն ալ գտնէ, քիչ ատենէն կը դադրի արծաթ դրամի հետ կարենալ մրցելէ, և անմիջապէս հարկ կըլլայ անոր գործածութիւնը պարտաւորիչ ընելով ժողովուրդը կողոպտել։ Ասոր համար է որ Միրապօ իրաւունք ունէր զայն ենրջնոր բռնակալութեան ծայրայեղ չէժումն կոչելու։ Թերթ մը թուղթ, ինքնիրեն խաղալիկ հողմոց, ինչ տեսակ դրոշմ և կնիք կրելու ալ լինի, արժէքը խանութի գինն է միշտապէս։ Բամաննու վկայ է Գաղղիոյ մեծ յեղափոխութեան հնգապետաց իշխանութեան վերջին օրերը (1799ին) մեր հարց մինչև 500 հազար ֆրանքի թղթադրամով (ասինեա) ջուխտ մը կօշիկ գնելը։ Տէրութիւնն ուզեց նմանիլ վաճառականի մը, որուն ստորագրութիւնն ըստակի տեղ կընդունուի, թէև իւր պարտամուրհակները՝ վճարելու պարզ խոստմունք են և ոչ վճարմունք։ Բայց վաճառական մը եթէ իւր փոխանակագիրը չուզէ վճարել, կրնան զինքը նեղել. եթէ սնանկանայ՝ դատարաններն իրեն կըսպասեն . . . ։ Իսկ սնանկացող տէրութեան դէմ քաղաքացիք ուրո՞ւ բողոքեն։ Վաճառականը չբռնադատեր զոք իւր պարտամուրհակներն ընդունելու, իսկ իշխանութիւնը կ'ստիպէ զմեզ իրեններն ընդունիլ։ Փոխանակագիրք և հրամանիք՝ վճարելի այս կամ այն անձին՝ շատ դիւրին միջոցներ են, վասն զի բազում վտանգ և տեղափոխութեան ծախք կը խնայեն մեզ, որք արծաթ դրամի համար անհրաժեշտ են։ Բայց ո՞վ կը համարձակի այսօր պաշտպանել թղթադրամը, որ ինքնին վտանգ մ'է և զոր ստակի տեղ կուզեն տալ։ Միով բանիւ, Պ. Տ. Թըրասիի հետ պէտք է խոստովանիմք թէ թղթադրամը բոլոր խարդախեալ սնանկութեանց մէջէն ամենէն մեղապարտն և ամենէն աղիտաբերն է։ Անկեց վերջը կուգայ կեղծ դրամ կտրելն. և երբ տէրութիւն մը իւր պարտականութեանց հաւատարիմ չըկրենալ գտնուելու աստիճան դժբաղդութեան մէջ կիյնայ, ամենէն աղէկ ընելիքն է՝ իբր անխոհեմ բայց գոնէ պարկեշտ վաճառական մը՝ բացարձակապէս իւր սնանկութիւնն յայտարարել և իւր պարտատերաց հետ անկեղծաբար գործերը կարգադրել։ Զարիքն համեմատաբար շատ աւելի նուազ կը լինի, համբաւը չկորուսաներ, և վստահութիւնն իսկոյն կը վերածնի, երեք անգին առաւելութիւնք։ Ուր որ ուղղութիւն կայ և պարկեշտութիւն, հոն նաև դարման չարեաց, և այս այն բազմաթիւ կէտերէն մին է՝ յորում տնտեսական գիտութիւն և բարոյականութիւն զիրար կը շօշափեն։ »

Այս և ասոր նման ճշմարտութիւնք ըստ մեզ ոսկեղէն տառերով և դիւրահասկանալի ժողովրդական լեզուաւ հրապարակներու մէջ և աղբերաց ճակատը պէտք էին քանդակել 'ի լուր և 'ի գիտութիւն ամենեցուն, որպէս զի մօքերնուն մէջ լաւ մը տպաւորուէր և երևան ելած վայրկենէն իբրև ժանտախտ մը զգուշանային։

Յուսամք թէ այսչափով բաւական հասկցուեցաւ թէ ինչ է թղթադրամն և ո՛րն է ընդհանուր դարմանն։

Գալով 'ի մասնաւորի մեր պետութեան թղթադրամին, մեք որ երկար խօսելու դիտաւորութիւն չունիմք և ոչ ալ քաջահմուտ տնտեսագէտ ըլլալու պահանջում, մի միայն պարզ դատողութեան վրայ յենլով՝ համառօտիւ 'ի նկատի առնումք թէ ո՛րպիսի պարագայից մէջ վերջին անգամ հրապարակ հանուեցաւ թղթադրամն, և հետեւցնեմք թէ ո՞րն է մեր կարծած հնարաւոր դարմանն ըստ տեղական պիտոյից և ձեռնհասութեան։

Ամենքս ալ գիտեմք որ վերջին աղէտալի պատերազմին դառն պտուղն է այս թղթադրամը, թէ և չեմք կրնար ըսել բուն իսկ պատճառը, վասն զի հարկ կը լինի դարերով ետ երթալ և տէրութեան յետադիմելուն սկզբնական աղբիւրն ելնել, և մեր այս անձուկ սահմանէն և նպատակէն դուրս է ընդհանուր վարչական մեքենային 'ի սկզբանէ հետէ թերութիւնները մի առ մի նշանակել։ Սա միայն յիշեցնեմք և անցնիմք յօդուտ պատգային։ Պատերազմը՝ նոյն իսկ ամենահարուստ տէրութեան մը համար ամեն ժամանակ և ամեն տեսակէտով դժնդակ աղէտ մ'և ծանր հարուած մ'է, ո՛ւր կը մնայ մեզ պէս աղքատ վարչութեան մը համար։ Հեռացնել զայն, առաջքն առնուլ կամ մանաւանդ պատճառները մէջ տեղէն բառնալ՝ նոյն իսկ ամենամեծ զոհողութեամբ՝ իմաստութիւն է, վասն զի պատերազմին հետեւանքը պարտելոյն չափ յաղթողին ալ դրեթէ միատարբեր է և բազմածախ, մանաւանդ ներկայ դարուս մէջ, յորում զէնք և զինուորական կազմակերպութիւնք՝ ինչպէս նաև ռազմամըթերք՝ օր քան զօր կը կատարելագործին, և նոյն իսկ ամենէն ընդարձակածաւալ և ճոխապանծ պետութեանց գանձերը կ'սպառեն։ Վերջին պատերազմին հրատարակուած օրէն յայտնի էր թղթադրամին գալիքը, իբրև ծանր հիւանդութեան մը նախընթաց չարաշուք նշան։ Ո՛րչափ շահաւոր պիտի ըլլայինք ամեն մասամբ՝ եթէ գիտնայինք տեղի տալ ժամանակին օգտոյն և պահանջմանց, և եթէ 'ի մասնաւորի տէրութիւնը դէմ փոխանակ թղթադրամը հանելու՝ միանգամ ընդ միշտ բունի փոխառութիւն մ'ընէր կամ պատերազմի տուրք մը դնէր հասարակութեան վրայ, փոխանակ այսպէս տակաւ առ տակաւ օգտաւէտ ընելով յետին չքաւորութեան և տառապանաց հասցնելու։ Բայց եղածն եղած է։

Գալով խնդրոյս շարունակութեան, ինչ տեսակէտով որ նկատեմք թղթադրամն (որոյ գումարը ճշդիւ չեմք գիտեր, 16 կամ 18 միլիոն լիրա՞յ է թէ աւելի), և ո՛ր կողմէ դառնամք, տէրութեան պարտքը ժողովրդեան պարտքն է, որովհետև ժողովուրդ և տէրութիւն մի են, և այնպէս պէտք է համոզուած լինին ամեն մարդ։ Ուստի հարկ է նկատել թղթադրամն իբրև փորձանք մը՝ որ պատերազմը բերաւ մեր գլխուն ի շնորհս մեր վարչաց անձեռնհասութեան (գոնէ այս չափս ներուի ըսել սիրտը այրած հասարակութեան անհատի մը) և ըստ այնմ շարժինք։ Տեսնեմք արդ թէ ի՞նչ է այս չարեաց հնարաւոր դարմանն։ Ընդհանուր դարմանը վերոյիշեալ տնտեսական յօդուածին վերջը ցոյց տրուած է։ Արդարև չեմք կրնար մեր տէրութիւնը բոլորովին սնանկացեալ վաճառականին նմանցնել, բայց ցարդ բռնուած ընթացքէն՝ քաղաքական տեսակէտով՝ աւելի շատ ժառանգի մը կրնայ նմանցուիլ, քանի որ այսքան երկիր կալուած և թաքուն հարստութիւնք կան ձեռուընուս ներքև ապարդիւն մնացած անհոգութենէ, ապիկարութենէ և չարակամութենէ։ Այս վիճակին բարւոքումը զօրեղ կարգադրութեան մ'և իմաստուն կազմակերպութեան մը կարօտ է, զոր եթէ մեք չընեմք, շատ հաւանական է որ օտարք պիտի միջամտեն և 'ի գլուխ հանեն։ Ըստ մեզ՝ Վեհ. Սուլթանին հաստատուն կամքն և զայն գործադրելու կարող իմաստուն խորհրդական մը բաւական են։

Իսկ թղթադրամին գալով, թէև այս ալ ընդհանուր բարեկարգութեան մէկ մասը կը կազմէ, ըստ մեր կարծեաց, յետ ծանուցանելոյ ժողովրդեան մեր վերն ըսածը թէ ազգ և տէրութիւն մի են, և թէ թղթադրամը պատերազմին հետեւանք եղող հասարակային պատուհաս մ'է, առժամ մինչև որ յաջողիմք նոր փոխա-

ութիւն մ՚ընելու, տէրութեան գանձը պէտք է օրուան գնով ոսկի և արծաթ դրամ առնալով իւր օրինաւոր հարկերն հաւաքէ, նոյնպէս ալ պաշտօնէից զօրաց և այլոց ամսականներն և այլ ռոճիկներն ոսկի կամ արծաթ դրամով վճարէ, որով պատերազմին սկսելէն 'ի վեր, բաց յանթիւ նիւթական և բարոյական անդարմանելի կորուստներէ՝ տեսակ մը տրոց փոխարէն թղթադրամ առնելով գանձուն կրած վնասն ալ չափով մը գոնէ դադրի այսուհետև։ Միանգամայն այդ թղթադրամին երեսէն դաս մը մարդկանց՝ գլխաւորապէս զօրաց, տէրութեան պաշտօնէից, և պետական հրամանաւ թղթադրամ ընդունելու պարտաւորեալ ընկերութեանց ոմանց հետևաբար և անոնց պաշտօնէից վրայ տարապարտուց ծանրաբեռնեալ այդ անիրաւ և անհանդուրժելի զրկանքը վերջ առնու, մինչև որ կատարուելիք ընդհանուր բարեկարգութեանց հետ վերջնական լուծում մ՚ընդունի թղթադրամի խնդիրն ալ, կամ իսպառ վերցուելով հրապարակէն և կամ վարկը բռնելով, այսինքն Պանքնօթի վերածելով զայն, ինչպէս որ պատշաճ դատուի։ Մ. Մ.

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 21 մարտ.

Թայմզ կըսէ թէ Արևելեան Րումէլիի համար խառն գրաւման մը խօսք կը լինի վերստին։

Ճիպրալթար 21 մարտ.

Թուրքիայէն եկող նաւերն եօթնօրեայ քարանթինայի մը պիտի ենթարկին։

Պուքրէշ 22 մարտ.

Զրոյց կը պտըտի թէ անցեալներն անյայտ եղող գնդապետի տեղակալ Կօլա Խոալացւոյն դիակը Դանուբ գետէն հանւեր է Մաչինի մօտ։

Գահիրէ 22 մարտ.

Նախարարութիւնը վերջնականապէս կազմուեցաւ ընդ նախագահութեամբ դահաժառանգ իշխանին։

Րիազ փաշան ներքին գործոց նախարարութեան մէջ կը մնայ և միանգամայն դատական նախարարութեան տեղակալութիւն պիտի ընէ։

Զիւլֆիքար փաշան արտաքին գործոց նախարար անուանեցաւ։

Էֆլաթուն փաշան պատերազմական գործոց նախարար անուանեցաւ։

Միւս նախարարք կը շարունակեն իրենց պաշտօնը։

Աթէնք 22 մարտ.

Հելլենական կառավարութիւնն հինգշաբթի օրն Եւրոպական մեծ տէրութեանց հեռագրական ծանուցագիր մը ղրկեց՝ Բրէվէզայի բանակցութեանց խզումը ծանուցանող։ Ասկէց զատ երէկ շրջաբերական մը ղրկեց որ Թուրքօ—Հելլենական յանձնախմբին գործողութիւնները կըպատմէ, Դրան Պէրլինի վեհաժողովին 13րդ. ատենադրութեան հիման վրայ բանակցել չուզելը կըծանուցանէ և տէրութեանց միջնորդութիւնը կը խնդրէ։

Աթէնք 22 մարտ.

Հելլենական կառավարութիւնը Փարիզ գտնուող իւր ներկայացուցիչներուն հրաման ղրկեց որ 60 միլիօն Ֆրանքի փոխառութեան վերաբերեալ պայմանադրութիւնն ստորագրեն, եթէ սեղանաւորքն ընդունին երեք նախկին պայմանները։ Յոյս կայ թէ սեղանաւորք պիտի ընդունին։

Պէշիքթա կեցող Անգղիական նաւատորմէն երեք զրահաւորք Յունաստանի Փալերա նաւահանգիստն եկան։

Փարիզ 22 մարտ.

Երեսփոխանաց ժողովը այս աւուր նստին մէջ, 131ի դէմ 339 ձայնիւ առաջարկութիւն մ'ընդունեց, որ ծերակուտի և երեսփոխանաց ժողովներուն համախորհուրդ ժողով (քօնկրէ) կազմելը կը խնդրէ՝ սահմանադրութեան այն յօդուածը վերաքննելու համար՝ որ յիշեալ երկու ժողովոց գումարման տեղին Վէրսայլի մէջ կը հաստատէ։

Այս առաւօտ հասած հեռագիրք

Պետրպուրկ 23 մարտ.

Ալէքսանդր կայսրն և կայսրուհին Լիվատիա երթալը մինչև ապրիլ 13 յետաձգեցին։

Գահիրէ 23 մարտ.

Անգղիոյ և Գաղղիոյ կառավարութեանց կողմանէ մարտ 8ին Խտիվին ուղղեալ ծանուցագիր մը՝ անոր տուած ապահովիչ խոստումները նկատողութեան առնլով, կը չեղէ այն ծանր պատասխանատուութիւնը զոր կ'առանձնէ նոր կարգադրութեանց պատճառ տալով, և այն կարգադրութեանց անգործադրելի մնալուն ծանր հետևանքը։

Գահիրէ 23 մարտ.

Երկու Եւրոպացի նախարարք 'ի միասին գործելով, Եգիպտական նախարարութեան խորհրդին մէջ տրուելիք ո և է որոշում 'ի հարկին մերժելու բացարձակ իրաւունք ունին։

Լոնտրա 22 մարտ.

Օսմ. Քօնս.		11 7/16
Փոխ.	1865	11 3/4
»	1869	11 1/4
»	1871	53
»	1872	21 1/2
»	1873	12 7/8
»	Եգիպտ.	70 3/8
Անգղ. Քօնս.		96 7/8

Փարիզ 22 մարտ.

Օսմ. Քօնս.	11,60		
Գաղղ. Քօնս.	3 0/0		78,30
» »	»	Նոր	81,27 1/2
» »	5 0/0		113,92 1/2

Փարիզ 23 մարտ. Փոքր Պօրսա

Օսմ. Քօնսօլիտէ 11,60

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Վասա Էֆէնտի Տպագրական տեսչութեան փոխանորդ անուանեցաւ՝ պետական խորհրդոյ անդամութիւնը վրան մնալով։

—

Սըր Հօրնպի ծովակալին հրամանատարութեան ներքև գտնուող Անգղիական նաւատորմն, որ Նիկոմիդիոյ ծովախորշէն մեկնելով Կէլիպօլուի առջև խարիսխ ձգած էր, չորեքշաբթի առաւօտ Կէլիպօլուէն մեկնեցաւ և Պէշիքթայի ծովախորշը գնաց։

—

Ճէրիտէի Հավատիս լրագիրը կը ծանուցանէ թէ մայրաքաղաքիս Գաղղիական դեսպան Պ. Ֆուռնիէ՝ Թուրքօ-Հելլենական բանակցութեանց խզումն իմանալով, Հելլենական դեսպան Պ. Քունտուրիօթիի գնացեր և այս եղելութեան նկատմամբ իւր ցաւն յայտներ է՝ յաւելով թէ Հելլէն պատուիրակները շատ աճապարած են իրենց որոշման մէջ։

—

Պօսնիոյ և Հէրսէքի, ինչպէս նաև Նովիպազարի խնդրոյ նկատմամբ Օսմանեան և Աւստրիական պատուիրակաց միջև բանակցութիւնք վերստին դադրեցան. Զիչի կոմսը բանակցութեանց արդիւնքն Աւստրիական կառավարութեան ծանուցած լինելով, նոր հրամանաց կսպասէ։

—

Խօսք կայ թէ Գերմանական կառավարութիւնը խորհուրդ տուեր է Բ. Դրան և Աւստրիական կառավարութեան, որ Պօսնիոյ և Հէրսէքի՝ ինչպէս նաև Նովի Պազարի խնդիրները ժամ առաջ բարեկամաբար կարգադրեն։

—

Թէպէտ կայսերական կառավարութիւնը Պ. Տը Թօքվիլի հետ բոլոր պայմանադրութիւնները ջնջած է, մասնաւոր հեռագիրք կը ծանուցանեն թէ Պ. Տը Թօքվիլ ձեռնթափ չէ եղած, և Փարիզի ու Լոնտրայի սեղանաւորաց հետ բանակցութիւններ կընէ և նոր ծրագրեր կը պատրաստէ։

—

Շաբաթ երիկուն Վիլհէլմ կայսեր ծննդեան տարեդարձին առթիւ Գերմանական դեսպան Հացֆէլտ կոմս ճաշ մը տուաւ մայրաքաղաքիս բնակող Գերմանացւոց երևելիներուն։

—

Կիրիտէն լուր կը տրուի թէ տեղւոյն ազգային ժողովն, որ տարւոյս սկիզբը գումարուած էր, գործերը լմնցնելով փակուեր է, և Ցոյն և Իսլամ երեսփոխանաց մեծ մասն իրենց գաւառները վերադարձեր է։

—

Գարասիի նախորդ կառավարիչ Սէբրի փաշան, որ Տրապիզոնի կուսակալ անուանուած է, շաբաթ օրը մայրաքաղաքս եկաւ։

—

Կը լսեմք թէ Ռլինեցւոց դէմ 'ի գործ դրած անողոք խստութեամբք համբաւեալ Հալէպի կուսակալ Քեամիլ փաշան վերջապէս պաշտօնանկ եղեր է։

—

Ադրիանուպոլսէն եկած նամակները կը ծանուցանեն թէ Ս. Քօպելէֆ զօրավարն անցեալ կիրակի օրն Ադրիանուպոլսէն մեկներ է՝ իւր հրամանաց ներքև գտնուող հեծելազօրաց բաժնին հետ և Մուսթաֆա փաշա գնացեր է։ Այժմ Ադրիանուպոլսոյ մէջ քանի մը գումարտակ Ռուսական զօրք միայն կը մնան՝ բանակին մատակարարութեան պիտոյքն և հիւանդանոցը պահպանելու համար։

Քաղաքին և շրջակայից վարչութիւնն ու տումարները մարտ 2/14ին Բէհիֆ փաշային յանձնուեր են, և Օսմանեան վարչութիւնը պաշտօն վարել սկսեր է։

Ռուսաց վերջին ժամանակներս պարպած գիւղերուն գրեթէ բոլոր քրիստոնեայ բնակիչքն Արևելեան Րումէլի գաղթեր են։ Ադրիանուպօլսէն ալ հարիւր քրիստոնեայ ընտանիք գաղթեր են։ Բայց կը կարծուի որ գաղթողներուն մեծ մասն՝ Արևելեան Րումէլիի մէջ բնակելու յարմար տեղ և դիւրութիւն չգտնելով նորէն Ադրիանուպոլսոյ նահանգը պիտի վերադառնան։

—

Վաքըթ լրագիրը կը ծանուցանէ թէ Արևելեան Րումէլիի կառավարիչ Սեթօլիբէն զօրավարը Թուրք մ'ի Սիպերիա աքսորելու հրաման տուած լինելով, Փիլիպէ նստող Եւրոպական յանձնախմբին Անգղիական առաջին պատուիրակը սաստկապէս բողոքեր է։

—

Ռուսիոյ կառավարութիւնն ի մօտոյ Եւրոպայէն 20 միլիոն Անգղիական ոսկւոյ փոխառութիւն մը պիտի ընէ Ռօչիլտի ընկերութեան միջնորդութեամբ։

—

Պետրպուրկի Անգղիական նորընտիր դեսպան Լորտ Տիւֆֆրին մարտի 11ին Ռուսիոյ կայսեր ներկայացաւ և տեսակցութիւնը մէկ ժամու չափ տևեց։ Նախորդ դեսպան Լորտ Լօֆթիւս նոյն օրը մեկնեցաւ Ռուսիոյ մայրաքաղաքէն։

—

Անգղիոյ երեսփոխանաց ժողովոյն մարտ 1/13ի նստին մէջ, արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Պ. Պուրք հարցման մը պատասխանելով ըսաւ թէ Անգղիական կառավարութեան տեղեկութիւն տրուած էր թէ անցեալ շաբթու Մանչէսթէրի և Լիվըրբուլի վաճառականներէն ոմանք Գաղղիական շոգենաւու մը մէջ 890 հրացան և 50,000 լիպրա վառօդ բեռնաւորած են և շոգենաւը Մօզամպիք երթալու համար ճամբայ ելած է։ Անգղիական կառավարութիւնը Փորթուկալի կառավարութենէն խնդրած է որ այդ շոգենաւուն պարունակութիւնը Զուլուներուն երկիրը տարուելուն առաջքը առնու, և միանգամայն այդ զէնքերն ու ռազմամթերքը ղրկող վաճառականաց դէմ դատ բանալու համար փաստաբանաց խորհուրդ հարցուցած է։

—

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍՀԱՄԸ ՕՍՄԱՆԻԷ

Շաբաթ երիկուն գոցուեցաւ		12.30
Այս առաւօտ բացուեցաւ		12,26
կէս օրին		12,25
Րումելիի երկաթուղի	Ֆր.	43
Թղթադրամ	մր.	625

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Կ. Պոլիս 11 Մարտ

Սօսիէթէ Ժէնէրալի բաժ.		Անգղ. լր.	4.25
» փոխանակութեան		»	3,22
Կ. Պոլսոյ Պանքային		»	6. 7
Քրէտի Ժէնէրալ		»	5.
փոխ.	1863	Ֆր.	69
»	1865	»	72
»	1869	»	70
»	1872	»	21
»	1873	»	66

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

12 Մարտ

Անգղ. լիրա	ղրշ.	109 27
Նափոլէոն ոսկի	»	87 14
Իմբերիալ Ռուսի	»	89 25
Գըրըմից	»	51 10
Մէճիտիէի տարբերութիւն	»	5
Չինգնոց	»	113
Պշլիկ	»	145

ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ շաբթու ծանուցած էինք թէ Հայաստանի մէջ գործադրուելիք բարենորոգմանց ծրագիր մը պատրաստուած է դաշնագիր տէրութեանց խորհրդով և Բ. Դրան ներկայացած։

Այժմ կիմանամք թէ դեսպաններուն առաջարկած ծրագիրն է՝ Պէրլինի դաշնադրութեան 23րդ յօդուածը հիմ բռնել Հայաստանի մէջ գործադրուելիք բարենորոգմանց։

Ահաւասիկ յիշեալ յօդուածը.

Յօդ. 23. Բ. Դուռը կը խոստանայ Կրետէի կղզւոյն մէջ խղճի մտօք գործադրել 1868ի վարչական կանոնադրութիւնն՝ արդար դատուած բարեփոխութեամբք։

Նմանօրինակ կանոնադրութիւնք տեղական պէտքերէ յարմարեալ՝ 'ի բաց առեալ Կրետէի շնորհուած ապահարկութիւնը, հաւասարապէս պիտի շինուին ու գործադրին Եւրոպական Թուրքիոյ ուրիշ մասանց մէջ, որոց համար յատուկ կազմութիւն մը նախատեսուած չէ սոյն դաշնագրութեան մէջ։

Բ. Դուռն յատուկ յանձնաժողովներ պիտի յանձնէ այն նոր կանոնադրութեանց մանրամասն պարագաները խմբագրել իւրաքանչիւր գաւառաց համար։ Սոյն յանձնաժողովոց մէջ տեղացի տարրն ընդարձակապէս ներկայացեալ պիտի լինի։

Այս աշխատութեանց արդիւնք լինելիք կազմական ծրագրերը Բ. Դրան քննութեանը պիտի ներկայանան, նա ալ հրատարակելէ ու գործադրելէ առաջ՝ Արևելեան Րումէլիի համար կազմուած Եւրոպական յանձնաժողովին կարծիքը պիտի առնու։

—

Կը լսեմք թէ Իզմիրլեան Գեր. Ս. Մատթէոս Եպիսկոպոս անձնական սկարութեան պատճառաւ չէ ընդուներ պատրիարքական փոխանորդութեան պաշտօնը, և հրաժարական գրեր է առ Մայր դիւանն, նա ալ Ս. Պատրիարք Հօր և Խառն Ժողովոյ հաղորդեր է։

—

Քուրիէ տ'Օրիան լրագիրն իւր վերջին հինգշաբթի (մարտ 8) աւուր թուով յօդուած մը կը հրատարակէ 'ի պատասխանի մեր մարտ 1 թուով գրած յօդուածին, որ՝ ինչպէս կըյիշեն ընթերցողք՝ պատասխան մ'էր Քուրիէի անցեալ փետրվար ամսոյ 27ին մեր ազգային գործոց վրայ հրատարակած մէկ յօդուածին։

Քուռիէ մ'Օրիան իւր վերջին յօդուածով հակասութիւն դտնել կը փորձէ մեր իրեն տուած պատասխանին, և անկէ առաջ՝ այսինքն վեռարվար 24ին Ազգային խորագրոյ ներքև հրատարակած մէկ լուրին մէջ, որոյ բնագիրն է հետևեալը.

«... Ս. Պատրիարք Հօր մէկ դիրը կարդացուեցաւ (Ազգային ժողովոյն մէջ), որով Ն. Սրբազնութիւնը կը պնդէր իւր հրաժարականին վրայ և կառաջարկէր որ եթէ անյապաղ Ազգային ժողովը նոր պատրիարքի մ'ընտրութիւն կատարել չուզէ, դո'նէ պատրիարքական տեղապահ մը կամ փոխանորդ մը կարդէ, որպէս զի վարչական գործոց ներկայ տարտամ վիճակը վերջ դտնէ։»

Սոյն հատուածին պարզապէս ընթերցումէն կընայ հասկցուիլ թէ մեր գրածներուն մէջ հակասութիւն չկար. ընդհակառակին Քուռիէ մ'Օրիան, որ «Ներսէս Սրբազան Պատրիարք մնալ և ազգային վարչուկ ինդիրներն իրեն վերապահել ուզած է» ըսեր էր, բոլորովին սխալման մէջ էր. Ս. Պատրիարքն այդպիսի բան մ'ըսած չէր, այլ այդ որոշումն Ազգ. ժողովն ըրած է, հետևաբար Քուռիէ մ'Օրիանին մեր գրուածոց մէջ գըտնել կարծած հակասութիւնն յօդս կը ցնդի։ Եւ որովհետև Քուռիէ մ'Օրիան կըսէ թէ Ներսէս Սրբազանին նամակին հրատարակութիւնն ամեն թիւրիմացութիւն պիտի վարատէր, բայց մեք դիտմամբ չենք հրատարակած, այս վերջին ապաւէնն ալ Քուռիէի ձեռքէն առնելու համար ահա իւր աչքին առջև կը դնեմք Ս. Պատրիարքին նամակը.

Վսեմափայլ Ատենապետ վարչ.
Ազգ. Ընդհանուր ժողովոյ

Քանիցս հաղորդեցի պատկառելի ժողովոյդ ինչպէս նաև Բ. Դրան՝ թէ Պատրիարքութեան ծանր պաշտօնին անկարող կը գտնուիմ, և թէ տկարութիւնս չթողուր որ այս գործերով զբաղիմ, և խընդրեցի թախանձելի որ հրաժարականս ընդունուի, թէ Բ. Դուռը և թէ Ձեր ատենապետաց դիւանը և թէ Խառն ժողովոյ կողմէն ներկայացողք յայտարարեցին թէ չընդունուիր հրաժարականս, չգիտեմ ի՞նչ պատճառաւ. ըստ որում մէջ բերուած պատճառներուն պատասխանները տուի, և հրաժարականս ետ առնել անկարելի է ըսի՝ թէ Բ. Դրան և թէ Ձեզ. բայց դարձեալ կը թախանձէք և կը պահանջէք որ այս պաշտօնը չթողում։

Այդ՝ դարձեալ պարտաւորուած եմ յայտարարել այսու գրով թէ անկարելի է ինձ մնալ այս պաշտօնին մէջ, և թէ յայտնի եղած պատճառներուն՝ գլխաւորն իմ վատառողջութիւնս է որ յայտնի է Ձեզ. ուստի կաղաչեմ որ եթէ Պատրիարք մը ընտրել հիմակու հիմայ դժար է, դոնէ Փոխանորդ մը կամ լաւ ևս Տեղապահ մը ընտրել բարեհաճիք, որպէս զի Բ. Դրան հետ յարաբերութիւնք և Ազգային գործառնութիւնք չդադրին և չը ճնշուին։

Աղօթարար
Խ. Ծ.

ՆԵՐՍԷՍ ԵՊ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
1879 փետր. 25
Ի Կ. Պոլիս.

Քուռիէ մ'Օրիան կըսէ թէ ինք Ներսէս Սրբազանին տեղ նոր Պատրիարք ընտրելու խորհուրդ չէ տըուած ազգային Ժողովին։ Մեք ալ չէինք գրած թէ ինք այդպիսի խորհուրդ մը տուած է ազգային ժողովին։ Բայց թէ Քուռիէ ինչո՞ւ համար այդպիսի խորհուրդ մը չէ տուած, պատճառը խիստ հետաքրքրաշարժ է։ Նախ թէ ինք Պատրիարքին հրաժարականին անկեղծութեանը չը հաւատար եղեր, և երկրորդ թէ՝ ազգային ժողովոյ մեծամասնութիւնն և Ներսէս սրբազան մէկտեղ քալելու սահմանուած են եղեր. ուստի որդար է եղեր որ Պատրիարքն իւր աշխարհավարութեան պտուղը քաղէ։

Այս երկու կէտերուն ալ պատասխանը տրուած էր մեր առջի յօդուածին մէջ. բայց Քուռիէ խոհեմութիւն համարեր է չյիշել մեր տուած պատասխանները։

Փոխանորդի մ'ընտրութեան խընդրոյն առթիւ ալ Քուռիէ մ'Օրիան իւր իրաւագիտական տաղանդը կը յայտնէ. առաջին յօդուածին մէջ ըսած էր թէ փոխանորդի մ'ընտրութիւնը Սահմանադրութեան հակառակ է. մեք ալ մեր տուած պատասխանին մէջ հարցուցեր էինք իրեն թէ ո՞ր յօդուածին հակառակ էր։ Քուռիէ իր երկրորդ յօդուածին մէջ՝ մեղ պատասխանել կարծելով՝ կը հարցնէ թէ ո՞ր յօդուածին համաձայն է։ Այս երկու հարցմանց անհուն տարբերութիւնը բացատրելու հարկ չկայ։ Բանի որ ինք յայտարարած էր թէ այդպիսի ընտրութիւն մը Սահմանադրութեան հակառակ է, բնականաբար իւր պարտքն էր ապացուցանել զայդ՝ ինչպէս որ ամեն իրաւագիտական օրէնք կը պահանջէ։ Քուռիէ այսպէս չըներ, այլ փախուստի ճանապարհ վնտռելով այնպիսի հարցում մը կընէ, որ նոյն իսկ իւր առարկութեան հերքումն է։

Քուռիէ մ'Օրիան Հայկական խընդրոյն համար աշխատողներն Հայ հասարակութեան «փոխատուր անդամներն» անուանած էր։ Մեք այս անտեղը և կոշտ ածականն իրեն վերադարձուցինք՝ իբր անվայել խըմբագրական բարեկիրթ ոճոյ։ Քուռիէ այդ անպատեհ թշնամանաց ընդարձակ նշանակութիւնը սահմանաւորելով կըսէ թէ Հայկական ինքնօրինութեան բոլոր կուսակիցներուն համար ըսած չէր, այլ միայն սկզբնապատճառ կամ շարժառիթ եղողներուն համար ըսած է։

Բայց մեր մեղադրանքն՝ ոչ թէ այդ բառին ընդարձակ նշանակութեան դէմ էր, այլ նոյն իսկ բառին դէմ, զոր բարեկիրթ խմբագրի մը դրչին անվայել համարած էինք և կը համարիմք։

... Տէր.

Փետրվար 25 կիւրակէ օրը մորդասիրական զգացում մը առաջնորդեց ինձ յանկելանոց ազգային Ս. Փրկչի։

Ճակատագրային յեղաշրջմանց կենդանի նկարը տեսնելու համար բաւական է ակնարկ մը խարձակել սոյն թշուառութեան ապաստանարանին վրայ։

Ամենավերջին զգացմունք սոյն գըթութեան սրբավայրին մէջ ծնունդ կ'առնուն, մինչև իսկ երկաթեայ սրտերու մէջ։

Սոյն այցելութիւնը խոր տպաւորութիւն մը ունեցաւ իմ սրտիս վրայ, վասն զի զգալի փարեփոխութիւն մը նշմարեցի սոյն հաստատութեան անցեալին և ներկային մէջ, որ լաւագոյն ապագայ մը կը խոստանայ։

Մնայուն բժիշկ մը անընդհատ կը խնամէ անկելոց, որոց մեծ մասը պանդուխտ են։

Քաջ հիւանդապահք անխոնջ ջանիւք կը հսկեն անկելոց վիճակին։

Կերակուրն համեստ՝ բայց սննդարար և կազդուրիչ։

Մաքրութիւն կը փայլի յամենայնի։

Վերջապէս կատարեալ օրինապահութիւն և կարգապահութիւն կը տիրեն ամենուրեք։

Հոգաբարձու Տեարք հակառակ օդին խստութեան՝ փութացեր էին դիմել անդ ըստ սովորականին և անձնանուէր ղեկավարութեամբ կը գործէին։

Վերջապէս այնպիսի մեծ դոհունակութիւն մը զգայի անկելանոցի ընդհանուր վիճակին վրայ, որ պարտ համարեցայ իմ ջերմ շնորհակալիքս յայտնել հրապարակաւ պատուաբժան Հոգաբարձութեան և մասնաւորապէս Կիւմիւշկէրեան Մերտասէտի և Յակոբեան էֆէնտիներուն, որ ներկայ էին անդ, և միանգամայն Տեառչ Խանճեան Զաքար էֆէնտիի, որոյ ընտրութիւնը մեծ պատիւ կը բերէ Պատ. Հոգաբարձութեան։

Միևնոյն առթիւ հրաւէր կը կարդամ պանդուխտ հայրենակցայ որ փոխանակ խաներու խորշեր շրջելու՝ ի հարկին դիմեն սոյն անկելանոց որ ողջպահիկ օրինաց պահանջած կարևոր խնամքը պիտի ընդունին։

Մասնաւոր յիշատակութեան արժանի կը համարիմ Արմենակ Համբարձումի դեռահաս պատանւոյն յաջողակութիւնը 'ի նկարչութեան՝ որ իմ հիացումս գրաւեց։

Հաճեցէք, Մեծ. Տէր, ընդունիլ ներկայս ձեր բարեհամբաւ թերթին ասպնջականէջերուն մէջ։

5/17 մարտ 1879 Սէրմ Նեշդան
Կ. Պոլիս

Եւդոկիա 13 մարտ 1879.

... Տէր.

Հաճեցէք հիւրընկալել հետևեալ երկտողիս Ձեր անկողմնակալ Մասեաց թերթերէն միոյն մէջ 'ի սէր ճշմարտութեան։

Մ. Զերաղ էֆէնտիի դէմ՝ Արտաւազդ անուն մէկին ձախող քննադատականին 'ի պատասխան Գարեգին ստորագրութիւնը կրող յօդուած մը կարդացինք Ձեր ազատախօս լրագրին մէջ, որ Եւդոկիացւոց կը թողայր պաշտպանել իրենց պատիւը Պ. Արտաւազդի գրութեան այն մասին դէմ, որով Եւդոկիացին «քանի մը խարդաւանող վարիչներու ձեռք դարձիք դարձած ամբոխ մը» կը ներկայացուցէ Զերաղ էֆէնտին Կեդր. երեսփոխական ժողովոյ անդամ ընտրած ըլլալուն առթիւ։

Եւդոկիացին կուգայ համարձակութեամբ յայտարարել թէ ինք ամենայն լրջմտութեամբ խորհելով և Զերաղ էֆէնտիի դրական արժանիքն և հայրենասէր ոգին լաւ ճանչցած ըլլալով՝ անդամ ընտրած է երեսփոխական ժողովոյ և ամենևին սխալած ալ չէ իր այդ պատուաբեր ընտրութեան մէջ և հետևաբար ինք երբէք գործիք ըլլալու վատ կացութեան մէջ գտնուած չէ, որչափ Պ. Արտաւազդ, ինչպէս կ'երևի, այս մասին կամակատար և կոյր գործիք մը դարձած է դէթ իւր արհամարհելի կրից։

Անհակառակելի ճշմարտութիւն մ'է թէ կան դրութիւններ, որ աշխարհի ծափն ու դրուատիքը կ'ընդունին. ընդհակառակն կան և այնպիսիներ ալ, որք ծաղու և զզուանաց արժանի են։ Մենք կը հրաւիրեմք Պ. Արտաւազդ, որ իր այդչափ «հեռատես» աչքերովը տեսնէ ճշմարտութիւնը և լսէ իւր «սուր» ականջներովը Եւդոկիացւոյն այն արհամարհոտ քա՛հ... քա՛հներն, որ իւր խելապատակին ծնունդն եղող դրութեան արդարացի պատասխանն են և կրնան իւր գըրչին կարևորութիւնն ու արժանիքը ճանչցունել։

Մնամք...

Դ. Փասպանեան. Տ. Ճէնաւորեան.

Ա. ԶԴ

Ֆրէնկեան վաճառատան մէջ ըստիպողական պարապութիւններ կը տեսնուին մարտ 15ի վիճակահանութեան ճիշդ ժամուն տրամադիր դըտնուելու։ Գաւառները պատուէր եղած է թէ քիչ օր մնացած ըլլալուն՝ հեռագրի միջոցաւ միայն կրնան Պոլիս իրենց ծանօթներու ձեռօք վիճակատոմս գտնել։ Մարտ 15 ժամ ճիշդ 6 ու կէս, սոյն վայրկենէն վերջը տոմսակի վաճառումը պիտի դադրի։

ԻԼԱՆ

Նիզամիյէ սարաճհանէ անղարը իլէ մէվիթաղ քօմիսիօնընա պիր սէնէյի քեամիլէ խիթամընա քատար հէր նէ մը քատար լուզումի օլուզ տէ թալէպ օլունուր իսէ թէպիմ քըլընմաք վէ ըէամի կէօմրիւկի իլէ թէպիմինէ քատար քեաֆիֆէի մէսարիֆի միւթէահիւտէ բաճի օլմաք վէ մադպուզ սենէտալէրինին թարիխնատէն իթիպարէն էսմանընին նըսֆը օն պէշ վէ նըսֆը տրիկերի օթուզ պիր կիւն միրուրինատէ սիմ մէճիտիէ իկիրմի ղրշ հկատալը իլէ նիզամիյէ խազինէսինատէն վէրիլմէք վէ պէհէր ատէտի տէօրթ եիւզ տիրհէմ կէլմէք վէ էկէր վէղնէ նօքսան կէլուր իսէ քէչէ իլէ իքմալ քըլընմաք վէ մէմհուր նումունէսինէ մընթաղը օլմաք իւզրէ միւպայեա օլունաճաք Գարահիսար քէչէսինին պէհէր ատէտի իկիրմի իքի ղրշա թալիպի էօհտէսինատէ օլուզ մարթ բումինին օն պէշինճի փէնշէնպիհ կիւնիւ թէքրար միւնասքատաղ պիլ իճրա քարարը դաթիսի վէրիլէճէյինատէն, իթա իթիմէյէ թալիպ օլանլարըն եէվմի մէղքիւրատէ Տարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

10 մարթ 1879

Պապը Սէրասքէրի

Թարարը ըլար նէզարինատէ գալուզ նիզամիյէ նանը ազիզ իտարէսինէ թէպիմ դըլընան դումանիա պաղիյէսինատէն էկլէ ղայրը սաղիհ օլարադ մէվճուտ օլուզ տարթըլաճադ օլան էլլի պին ղըյէ մեա չուվալ բէքսիմէթ ղըրղը թարիխի գարարընատ էսմանը եիւզիւք գայիմէ եիւզ ղրուշա օլարադ բէշինէն վէրիլէրէք գալարըրըլմադ վէ պու բէքսիմէթ խրիրթօ չըգարըլմադան մնատտա պաշգա պիր շէյ եարբըլմադ չարթը վէ շէրայիթի սայիրէսիյլէ իլան օլունմուշ իսէ տէ, մեղքիւր բէքսիմէթ ղըրղընէն էսմանը սիմ մէճիտիէ եիկիրմի ղրուշա նագտէն վէ բէշինէն թէպիյէսինէ մուախէրէն գարար վէրիլէրէք, թէքրար պիլ միւզայիտէ պէհէր ղըյէսի օն իքի փարայա թալիպի էօհտէսինատէ գալմըշ վէ մարթը բումինին օն իւչինճի սալը կիւնիւ միւզախտէսինին իճրասը յլա գարարը գաթիսի վէրիլէրէք ֆիրուխթ խալէճէկինատէն, իշթիրասընա թալիպ օլանլարըն եէվմի մէղքիւրատէ Տարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

10 մարթ 1879

Պապը Սէրասքէրի

Նիզամիյէ նանը Ազիզ իտարէսինատէ պուլունան տագիդ տէյիրմէնլէրի հասըլաթընատան սաթըլաճադ օլան եէտի եիւզ էլլի պին ղըյէ քէբէկին թարիխ գարարընատ իթիպարէն եէվմիյէ եիկիրմի պէշ պին ղըյէսի մէղքիւր տէյիրմէնլէրատէն ալոր իլէ գալարըրըլմադ վէ մէղքիւր քէբէկին էսմանը գալարըրըլմադատան էվվէլ թարիխի գարարընատ եիւզիւք գայիմէ եիւզ ղրուշլու նիզամիյէ էշեա պահասը սուրէթիյլէ թէսվիյէսինէ մուախէրէն գարար վէրիլուպ թէքրար պիլ միւզայիտէ պէհէր ղըյէսի օն փարա, յա թալիպի էօհտէսինատէ օլուզ մարթը բումինին օն իքինճի բաղար իրթէսի կիւնիւ գարարը գաթիսի վէրիլէրէք ֆիրուխթ օլունաճաղընատան իշթիրա իթմէկէ թալիպ օլանլարըն եէվմի մէղքիւրատէ սաաթ հէտիտէ Տարի Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

8 մարթ 1879

Պապը Սէրասքէրի

Advertisements referring to British or American Goods, etc., are exclusively received for this Paper at
EUG. MICOUD'S Foreign Advertising Agency 139—140, Fleet Street, London.

ԱՅԵՐԻ ՎԻԿՕՐԸ

Ով որ իր մաղերուն թափիլը չուզեր, «Այերի Վիկօր» կոչուած մաղի անուշահոտ ջուրէն գործածելու է. ուրիշ ամէն տեսակ մաղի ջուրերը կամ՝ իւղերը՝ որ մաղ չի թափելու համար կը ծախուին, բոլորն ալ անօգուտ են. իսկ Վիկօրի օգուտը միլիոնաւոր փորձերով տեսնուած է, և Պօլսոյ ու գաւառաց սէջ օր օրի գործածողներուն թիւը կաւելնայ։ Անոնք որ իրենց մաղերուն գեղեցկութիւնը կորսնցնելու վրայ են, շուտով գործածեն առ ջուրէն որ'ի մերջոյ չզղջան։ Թափելու վրայ եղող մաղերը կը հաստատէ ու կամրապնդէ, թափածներուն տեղը մաղ կը բուսցնէ երբոր մաղերուն արմատը ջնասուած չէ, ու ճերմկած մաղերը անպատճառ իր նախկին բնական գոյնին կը բերէ, գործածելուն կերպը շիշերուն հետն է. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և Ընկերաց Ամերիկայի Մագազան։

ԾՈՒՆԱՒՑՈՒՄ
ՏԱՄԱՏԵՆ ԶՈՒՎԱՐԱՆ

Օրուն տաքուն Ամ. 465

Հայ, Տաճիկ և Եւրոպացի տպագրական տառեր իրենց ամէն տեսակներով կը գտնուին պատրաստ խիստ արժան գիներով։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
Ա. Ա. ՍՈՒՐԷՆՆԱՆ
ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ ԱԶԳ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Մանր պղտոյց համար

Սուղ միջոցի մէջ այս երրորդ անգամն է որ ի լոյս կընծայի սոյն գիրքը, որուն իբր նախնական դասագիրք ունեցած կարևորութիւնը արդէն հազարաւոր օրինակաց սպառմամբն հաստատուած է։ Այս անգամ հեղինակը՝ երրորդ տպագրութեան մէջ՝ սոյն Ազգ. պատմութեան դասագիրքը խիստ կարևոր գիտելիքներով ճոխացուցած և ընդարձակած է, սկսեալ Հայկազանց ժամանակէն մինչև Պերլինի վեհաժողովը և տարբոյս սկիզբները պատահած մեծամեծ անցքերը։

Ընթիր և հաստատուն թղթի վրայ Հայաստանեայց տպարանէն ի լոյս ընծայուելով, կը ծախուի Եէնի—ճամի Զիլինկիրլէր ճատտէսի, թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 3 1/2 ղրշ արծաթ ոսկի։

Վարժարանաց համար օրինաւոր զեղչ կըլայ։

ՃԱՇԱԿ
ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ
ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԱՒ

Աշխատասիրութեամբ Ա. Պիպէոճեանի

Ազգային հեղինակաց զանազան գործերէն քաղեալ ընտիր հաւաքածոյ մ' է Աբ՝ակ և Ոտանաւոր, որով բանասէրք կրնան կատարեալ ճաշակ մ՝առնուլ արդի Հայ մատենագրութեան վրայ։

Գործը տպագրութեան յանձնուած ըլլալով, ծախքը փոքր 'ի շատէ թեթեւցնելու համար բաժանորդագրութիւն մը բացուած է բոլոր գրավաճառաց քով։

Բաժանորդագրութեան գինն է 2 ֆրանք. իսկ տպագրուելէն յետոյ 3 ֆրանքի պիտի ծախուի։

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ
ՊԱՏԱՆԷԿԱՆ ՆԵՐԾՆԶՈՒՄՆԵՐ

Ուսումնասէր հեղինակն այս գրքուկին մէջ ամփոփած է իւր գրուածնէրն, որք պատանեկան հասակի մէջ երկնուած, դեռահաս հոգւոյ մ'առաջին զբաղումներն և մտածումները կը պարունակեն։

Կը ծախուի Եէնի—ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ Հայ գրավաճառաց քով, 'ի գին 75 սանթիմ։

ԲԱՆԱԼԻ
ՀԱՅԵՐԷՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ
Գրեց Մ. Մամուրեան

Ահաւասիկ դեղեցիկ մեթոտ մը, որ Մամուրեան էֆէնտիի աշխատասիրութեամբ մուտ գտնելով մայրենի լեզուին ուսման մէջ, կառաջնորդէ աշակերտները շարադրել լինելու, չըսպասելով որ անոնք քերականութեան տաղտկալի շրջանէն անցնին։

Այս գրքոյկը Զմիւռնիոյ Տէտէեան եղբարց տպարանէն 'ի լոյս ընծայուելով, կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 50 սանթիմ։

ՄԻՆԱՍ ՁԵՐԱՁ
ԹԷ Ի'ՆՉ ՇՈՒՀԵՑԱՆԸ ՊԷՐԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԷՆ

Հայ պատուիրակութեան քարտուղար—թարգման Պ. Մինաս Ձերաձի սոյն հեղինակութեան առաջին տպագրութիւնն սպառած լինելով, երկրորդը հրատարակուած է յաւելուածով մը։

Ամէն Հայ գրավաճառաց քով կը գտնուի։ Գին 75 սանթիմ։

ԺՕՁԷՖ ՊԱԼՍԱՄՕ
Թարգմանեց Կարապետ Եպրմճեան

Աղէքսանդր Ֆիւմա Գաղղիացի մեծանուն վիպասանին գրչէն ելած սոյն գործին ուրիշերորդ այն է վերջին հատորն ալ Իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն 'ի լոյս ընծայուելով, Պօլիս հասած է։ Այս դեղեցիկ վէպին մէջ, ուր Լուի ԺԵի կեանքը, վարքն ու վախճանը նկարագրուած են, հետզհետէ կը ներկայանան Վոլթէռ և Ռուսօ՝ անցեալ դարուն այն երկու մեծ մարդիկը, թաքուն գիտութիւններ կը յայտնուին, Ֆրան—Մասօնայ օթեակներն օտարին առջև կը բացուին, վերջապէս ամէն կարդի և հասակի մարդ իւր սիրած նիւթը հոն կը գտնէ, և այլն։

Կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 2 ֆր. 25 սանթիմ։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻԹԻԼՃԵԱՆ

Լրագիրս ամէն օր կը հրատարակուի՝ բաց 'ի կիրակի և ազգ օրերէ։

Բաժանորդագրութեան սեղն է Ղալաթիա Սանտրգիրար Ճատտէսի թիւ 198, Նօրօ խան Մասիսի խմբագրատունը։ Իսկ գաւառաց մէջ հեռեւեալ հոգաբարձուաց գրասենեակները.

ԶՄԻՒՌՆԻԱ. Ստեփան էֆ. Տէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խոսրով » Էսկիճեան.
ՊՐՈՒՍԱ. Ստեփան էֆ. Թանկէրեան.
ՌՈՏՈՍԹՕ. Արժ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆէտլեան.
ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ.
ՍԱՄՍՈՒՆ.
ՏՐԱՊԻԶՈՆ. Ս. Էթմէքճեան էֆէնտի.
ԱՄԱՍԻԱ.
ՍԵԲԱՍՏԻԱ.
ԵՒԴՈԿԻԱ.
ԽԱՐԲԵՐԴ.
ԵՐԶՆԿԱ. Թադէոս էֆ. Բաղրատունի.
ԿԱՐԻՆ. Կարապետ » Զաքարեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ » Փոթիկեան.
ՎԱՆ.
ԲԵՐԻԱ. Սեդրակ » Խարաճեան.
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թովմաս էֆ. Թաշճեան.
ԵԴԵՍԻԱ.
ՄԱՐԱՇ.
ՖՕՐՇԱՆ. Ֆէրհատ աղա Ս. Ֆէրհատեան.
ՏՓԽԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղէոնդեան.
ԿԱԼԿԱԹԱ. Պետրոս աղա Հէքիմեան;



ՇԻՐԲԷԹԻ ԹԱՅՐԻԷԻ
ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՄԱՐՏ 1 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՄԱՐՏ 15

ՐՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժ.	Ե-բոպական Եղանակ	Թ.
12 45	Եէնիմահալէէն Մէզարպ. Պէյիւքտէրէ, Թարապիա, Եէնիքէյ, Սթէնիա, Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք։	32
1 45	Եէնիմ. Մէզարպ. Պէյիւքտա. Թարապիա, Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք։	19
2 45	Եէնիմահալէէն Մէզարպ. Պէյիւքտա. Թարապիա, Եէնիք. Սթէն. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ.	18
4	Մէզար, Պէյիւքտա. Թարպ. Եէնիք. Էմիրկ. Սթէն. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկ.	32
5	Եէնիմահ. Մէզարպ. Պէյիւքտա. Թար. Եէնիք. Էմիրկ. Պոյաճ. Ր Հիսար, Պէպէք, Արնավ. Պէյլ. Օրթաք. Պէշ։	28
6 30	Եէնիմահալէէն Պէյիւքտա. Թարապիա, Պէյքօղ, Եէնիքէյ, Էմիրկ. Գանլըճա, Ր. և Ա. Հիսար, Գանտիլի, Արնավ. Զէնկ. Պէյլեր. Օրթաքէյ, Գուզկ. Պէշիկթաշ, Իսկիւտար։	4
8	Ր. և Ա. Գավազէն Եէնիմահ. Մէզար. Պէյիւք. Թարապիա, Պէյքօղ, Եէնիք. Էմիրկէն, Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուրուչ. Օրթաքէյ, Պէշիկթաշ։	19
9 45	Մէզարպուրնուէն Պէյիւքտա. Թարապիա, Եէնիքէյ, Էմիրկէն, Ր. Հիսար, Արնավ. Օրթաքէյ, Պէշիկթաշ։	22

Աբնավուտ էեղէն

1	Արնավուտքէյէն, Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։	28
1 30	Արնավուտքէյէն, Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։	23
2	Պէպէք. Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ, Գաղաթաշ։	22
2 45	Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ. Գաղաթաշ։	21
3 30	Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ. Գաղաթ.	23
4	Արնավ. Գուրուչ. Պէշիկ. Գաղաթաշ։	18
10 15	Արնավուտքէյէն ուղղակի կամուրջ։	21
11	» » »	28

Ասիական Եղանակ

12 45	Պէյքօղ, Բաշտալ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտիլի, Վանիքէյ, Զէնկէլքէյ, Պէյլերպէյ, Գուզկ.	21
12 45	Արնավ. Վանիքէյ, Զէնկէլ. Պէյլեր. Գուզկ. Գաղ։	4
1	Ր. և Ա. Գավազէն Մէզար. Պէյիւքտա. Թար. Պէյքօղ, Բաշտալ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկէլ. Պէյլեր. Գուզկ.	17
3	Պէյիւքտա. Պէյքօղ, Բաշտալ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Զէնկ. Պէյլ. Գուզկ. Գաղաթաշ։	33
8 45	Պէյիւքտա. Պէյքօղ, Բաշտալ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկէլ. Պէյլերպէյ, Գուզկ. Իսկ.	23

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՆԻԵՐԸ

Ե-բոպական Եղանակ

2	Գաղ. Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթ. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ա. և Ր. Հիսար, Գանլ. Էմիրկէն, Եէնիք. Պէյքօղ, Թարապ. Պէյիւք. Եէնիմահ։	4
2 30	Պէշիքթ. Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Մէզար.	32
5	Գաղ. Պէշիկ. Օրթաք. Արնավ. Պէպէք Ր. Հիսար, Պոյաճ. Եէնիք. Պէյքօղ, Թարապ. Պէյիւք. Մէզարպ. Ր. և Ա. Գավազ։	19
6 30	Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ր. Հիսար, Պոյաճ. Եէնիք. Թար. Պէյիւք։	23
8	Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէյիւքտա. Մէզարպուրնու։	22
10	Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Սթէն. Եէնիք. Թարպ. Պէյիւք Մէզար. Եէնիմահ։	32
10 40	Պէշիկ. Օրթաք Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Սթէն Եէնիք. Թարապ. Պէյիւքտա. Մէզարպ. Եէնիմ.	18
11 15	Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Եէնիքէյ, Թարապիա, Պէյիւքտա. Մէզարպ. Եէնիմահալէ։	19

Աբնավուտ էեղ

2 15	Ուղղակի Արնավուտքէյ։	21
2 45	» »	23
3 30	» »	18
9 30	Գաղ. Պէշիկ. Օրթաք. Գուր. Արնավ.	21
10 15	Գաղաթաշ, Պէշիկթաշ, Օրթաք. Գուր. Արնավ.	28
11 15	Գաղաթ. Պէշիկ. Օրթաք. Գուրուչ. Արնավ։	23
11 45	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ։	28
12	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավուտ.	4

Ասիական Եղանակ

3 15	Իսկ. Գուզ. Պէյլ Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշտալ. Պէյքօղ, Թարպ. Պէյիք. Մէզարպ.	28
9 45	Գուզկ. Պէյլերպ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշտալ. Պէյքօղ, Պէյիւքտա. Մէզարպ. Ր. և Ա. Գավազ։	17
10 30	Գաղաթ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշ. Պէյքօղ, Թարապ. Պէյիքտ.	33
11 10	Գուզկ. Պէյլ Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշտալ. Պէյքօղ։	21
11 40	Գաղաթ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Պէպէք։	22